ոչ թէ իր բոլոր ազգականների, ինչպէս թուրքերի մօտ է: Միաժամանակ Փիրոմալլին նկատում է, որ Իրանում գործում է նաեւ մի օրէնք, որ Թուրքիայում չկայ՝ մահմեդականացողը կարող է կրկին քրիստոնեայ դառնալ (SOCG, vol. 316, f. 117): Փիրոմալլին նոյն բովանդակութեամբ նամակով սեպտեմբերի 6-ին դիմում է նաեւ պապին (նոյն տեղում, f. 118): Հաւատասփիւռի նախագահ, կարդինալ Բարբերինին 1658 թ. յուլիսի 1-ին այս խնդրանքով դիմում է Մադրիդի պապական նուիրակին, որպէսզի թագաւորին նամակ գրել տայ ի նպաստ Նախիջեւանի հայ կաթողիկէների, քանի որ «երկու գիւղեր ամբողջովին մահմեդականացել են» (Lettere volgari, vol. 32, f. 80):

* 1659 Marzo 12 - Մադրիդի պապական նուիրակը կարդինալ Բարբերինոյին հաղորդում է, որ ինքը դիմեց Իսպանիայի թագաւորին գրելու համար պարսից Շահին Նախիջեւանի հայ կաթողիկէների մահմեդականացման օրէնքի մեղմացման համար: Բայց քանի որ թագաւորը 30 տարի է չէր գրել եւ ծանօթութիւն չունէր էլ Պարսկաստանի նոր թագաւորի հետ՝ դժուարացաւ դիմել նրան (SOCG, vol. 222, f. 30),
* 1660 մայիսի 15 - Թոխաթից Անտոնիո Տանին Հաւատասփիւռի քարտուղար Ալբրիցցիից խնդրում էր, որպէսզի պապը միջնորդէ ու յորդորէ եւրոպական քրիստոնեայ թագաւորներին՝ գրելու Պարսկաստանի Շահին կանխակալելու այս օրէնքը (SOCG, vol. 222, f. 58),
* 1669 սեպտեմբեր 17 - Նախիջեւանի հայ կաթողիկէները խնդրում են Հռոմի Ս. Աթոռի միջամտութիւնը պարսից Շահի առջեւ՝ ազատուելու համար այս օրէնքից (տե՛ս Acta, vol. 38, f. 437, n. 4; SOCG, vol. 421, f. 119-124),
* 1674 Մարտի 24 - Ապարաներից Նախիջեւանի Մատթէոս Աւանիսեանց արքեպիսկոպոսը Հաւատասփիւռ Ժողովից խնդրում է օգնութիւն ընդդէմ հաւատափոխութեան: Տեղեկացնում է, որ Գանձակ գիւղում բոլորը մահմեդական են, միայն 10 կաթողիկէներ են մնացել, Կէծուկում՝ 8 տուն, իսկ Ղարաղուշում՝ 5 տուն: Եթէ 1-2 տարի էլ անցնի՝ ոչ մի քրիստոնեայ չի մնայ (SC Armeni, vol. 2, f. 364rv):